Կարգապահական գործ թիվ ԿԳ-25070

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՂԱՍՈՒ ՄԿՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետև նաև՝ Պալատ)** կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Աղասու Մկոյանին (արտոնագիր՝ թիվ 2736), **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Աննա Նազարյանը **(այսուհետև նաև՝ Դիմող),** դիմելով Պալատ, դժգոհությունն է հայտնել փաստաբան Տիգրան Մկոյանի վարքագծից:

Դիմողը նշել է, որ 2019 թվականին իր նախկին ամուսինը Վանաձորի ոստիկանության Տարոնի բաժնում հաղորդում է ներկայացրել այն մասին, իբրև Դիմողը ծեծել է իր երեխային: Հաղորդման հիման վրա հարուցվել է քրեական գործ՝ 18.04.2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի **(այսուհետև՝ Օրենսգիրք)** 118-րդ հոդվածի խախտման հատկանիշներով: Նշված քրեական գործով ընթացել է նախաքննություն: Երկու տարի անց Դիմողի արարքը վերաորակվել է որպես խոշտանգում և գործն ուղարկվել է դատարան:

Դիմողի նկատմամբ հարուցված քրեական գործով հանրային պաշտպան է նշանակվել Փաստաբանը:

Դիմողը նշել է, որ դեռևս նախաքննության ընթացքում Փաստաբանը հանդես է եկել ի վնաս Դիմողի շահերի: Նախապես ծանուցված լինելով հարցաքննության օրվա ու տեղի, ժամանակի մասին՝ Փաստաբանը զանգահարել է Դիմողին և հայտնել, որ հարցաքննություն տեղի չի ունենալու, և որ անհրաժեշտություն չի լինելու ներկայանալ քննչական մարմին, Դիմողը քննչական մարմին չի ներկայացել և քննիչը Դիմողին բերման ենթարկելու մասին

որոշում է կայացրել:

Դիմողին իր մանկահասակ որդու հետ բերման են ենթարկել անմիջապես աշխատանքի վայրից ու հարցաքննությունը տեղի չի ունեցել, երեխայի հետ ժամերով կանգնած են մնացել միջանցքում, նստելու տեղ, սնունդ և ջուր չեն առաջարկել: Զանգահարել է Փաստաբանին, սակայն վերջինս չի եկել և հայտնել է, որ զբաղված է:

Ըստ Դիմողի՝ վերը նշված քրեական գործով Փաստաբանը հրաժարվել է կատարել Դիմողի հանձնարարությունները, այն է՝ հարցումներ կատարել, բացարկի միջնորդություններ ներկայացնել դատավորին, բողոքարկել փաստաբան Կարեն Ստեփանյանի, ըստ Դիմողի ապօրինի գործողությունները:

Դիմողի պնդմամբ, Դիմողի կողմից իր երեխային հոգեբանական ազդեցության ենթարկելու վերաբերյալ հակառակորդ կողմի հայտարարության դեմ, Փաստաբանը չի առարկել:

Դիմողը նշել է, որ եթե որևէ դատական նիստի ժամանակ Դիմողն առարկել է հակառակորդ կողմին, ապա Փաստաբանը Դիմողին հակառակ, հայտարարել է, որ հարցի լուծումը թողնում է դատարանի հայեցողությանը:

Դիմողը նաև նշել է, որ Փաստաբանն իր ճառի տեքստն առանց Դիմողի հետ համաձայնեցնելու դատարանում ընդունել է վերջինիս մեղքն ու առնչությունը Օրենսգրքի 118-րդ հոդվածով սահմանված ծեծի արարքին, այն դեպքում, երբ Դիմողը չի ընդունել նշված հոդվածով մեղադրանքը և իր ճառում պահանջել է դատարանին արդարացնել իրեն:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը դատարանին խնդրել է արդարացնել Դիմողին խոշտանգման մեղադրանքով, իսկ հետո նշել, որ եթե դատարանն, այնուամենայնիվ, Դիմողի արարքում հանցակազմ կգտնի, խնդրել է ղեկավարվել Օրենսգրքի 118-րդ հոդվածով և ըստ այդմ կիրառել վաղեմություն:

Արդյունքում Դիմողը եկել է այն եզրահանգման, որ եթե Փաստաբանը Դիմողի անունից խնդրել է Օրենսգրքի 118-րդ հոդվածի կիրառում, ապա դա նշանակում է, որ նա փաստացի ընդունել է Դիմողի առնչությունը ներկայացված մեղադրանքին, ինչի թույլտվությունը Փաստաբանը Դիմողից չի ստացել:

Նշել է, որ Փաստաբանի կողմից թույլ տված խախտումը եղել է 17.04.2025թ. դատական նիստի ժամանակ:

Դիմողը խնդրել է Փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և դադարեցնել Փաստաբանի փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը: Դիմումին կից ներկայացրել է Փաստաբանի հետ ունեցած հեռախոսային խոսակցության ձայնագրությունը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 21.07.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 01.08.2024 թվականի բացատրությամբ հայտնել է, որ ներկայացրել է դատական նիստերի ձայնագրությունները՝ հավելելով, որ դատավճիռն իր մոտ դեռ առկա չէ:

Դիմողը նշել է, որ դատավճիռը կայացվել է այնպես, ինչպես ներկայացրել է իր դիրքորոշումը Փաստաբանը՝ Դատարանը կիրառել է Օրենսգրքի 118-րդ հոդվածը, վերաորակել է 119-րդ հոդվածը 118-ի ու վաղեմություն կիրառել:

Դիմողը հավելել է, որ կներկայացնի դատավճիռը ստանալուն պես:
Հանձնաժողովի նիստ(եր)ին Դիմողը չի մասնակցել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Տիգրան Մկոյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Աննա Նազարյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 19.05.2025 թվականի բացատրությամբ տեղեկացրել է, որ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշմամբ թիվ ԼԴ/0060/01/21 քրեական գործով ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը:

Փաստաբանը նշել է, որ 2025 թվականի ապրիլի 9-ին դատարանում հանդես է եկել ճառով, ներկայացրել է իր դիրքորոշումը մեղադրանքի հետ կապված և նշել, որ դատարանը պետք է Դիմողին ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչի անպարտ և արդարացնի, նշել է նաև այն, որ եթե այնուամենայնիվ դատարանը գտնի, որ Դիմողի արարքում առկա է որևէ հանցակազմ, ապա նրա արարքը վերաորակի ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով Դիմողին ազատի պատասխանատվությունից:

Փաստաբանը նշել է, որ իր կողմից որևէ կարգապահական խախտում չի կատարվել, ինքն ամբաստանյալի մեղքի հետ կապված որևէ դիրքորոշում չի հայտնել, դա բացառապես կարող է հայտնել ամբաստանյալը, բացի այդ հեռախոսազանգի միջոցով Դիմողին փորձել է բացատրել, որ Փաստաբանը Դիմողի մեղքի հետ կապված դիրքորոշում չի հայտնել, եթե նույնիսկ դատարանը Դիմողի արարքը վերաորակեր ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, ապա դա ևս ենթակա է բողոքարկման:

Փաստաբանը նշել է, որ քրեական գործը գտնվում է վիճաբանությունների փուլում և Դիմողը հանդես է գալու ճառով, կարող է մեղադրանքի և արարքի վերաորակման վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնել դատարանում:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 21.07.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 01.08.2025 թվականի բացատրությամբ հայտնել է, որ թիվ ԼԴ/0060/01/21 գործով մասնակցում է այլ հանրային պաշտպան, դատական նիստը եղել է դռնփակ, ուստի չի կարող ներկայացնել դատավճիռը:

Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ որևէ կարգապահական խախտում չի եղել, ինքը ամբաստանյալի մեղքի հետ կապված որևէ դիրքորոշում չի հայտնել, դա բացառապես կարող է հայտնել ամբաստանյալը, ըստ էության արարքը վերաորակելը եղել է որպես 2-րդ պահանջ, քանի որ անկանխատեսելի էր, թե Դատարանն ինչ դատական ակտ կկայացներ, իսկ իր հիմնական առաջնային պահանջը եղել է արդարացնելը:

Փաստաբանը նշել է, որ եթե նույնիսկ Դատարանը Դիմողի արարքը վերաորակեր ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, ապա դա ևս ենթակա է բողոքարկման, ինչով պայմանավորված գտել է, որ մեղադրյալի շահերին հակասող որևէ գործողություն չի

կատարել:

Հանձնաժողովի նիստ(եր)ին Փաստաբանը չի մասնակցել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 2025 թվականի մայիսի 23-ի թիվ 163-Ա/ԿԳ-25070 որոշմամբ փաստաբան Տիգրան Մկոյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 3.5.3** ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

2025 թվականի հունիսի 02-ին կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին, այնուհետև վերահանձնարարվել է Հայկ Ծատուրյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը հանձնվել 2025 թվականի օգոստոսի 01-ին կազմել է եզրակացություն, որում շարադրվել են կարգապահական գործի կողմերի դիրքորոշումները, գործում առկա նյութերի ցանկը և էական այլ տվյալներ:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 2025 թվականի օգոստոսի 01-ին, այնուհետև Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի օգոստոսի 01-ի թիվ ԿԳ-25070-1-Ա որոշմամբ ընդունվել է Հանձնաժողովի վարույթ:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 2025 թվականի սեպտեմբերի 03-ի ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել և իրականացրել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ թիվ ԼԴ/0060/01/21 քրեական գործի շրջանակներում, և այդ գործով Դիմողն ունեցել է ամբաստանյալի կարգավիճակ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով:*

2. Թիվ ԼԴ/0060/01/21 քրեական գործով Փաստաբանը 2025 թվականի ապրիլի 17-ին Դատարանում հանդես է եկել ճառով, որի շրջանակներում ներկայացրել է դիրքորոշում մեղադրանքի հետ կապված և նշել, որ Դատարանը պետք է Դիմողին ՀՀ քրեական

օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչի անպարտ և արդարացնի, նշել է նաև, որ եթե, այնուամենայնիվ, դատարանը գտնի, որ Դիմողի արարքում առկա է որևէ հանցակազմ, ապա նրա արարքը վերաորակի ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով Դիմողին ազատի պատասխանատվությունից: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, դատական նիստի արձանագրությամբ:*

3. Թիվ ԼԴ/0060/01/21 քրեական գործով 2025 թվականի ապրիլի 17-ին Դատարանում ճառի շրջանակներում ներկայացրած վերոնշյալ դիրքորոշումը Փաստաբանը չի համաձայնեցրել Դիմողի հետ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև առկա չէ հակառակը հաստատող որևէ ապացույց:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Մկոյանը փաստաբան է հանդիսանում 27.12.2019թ. թվականից, և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում Փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Տիգրան Մկոյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.3 ենթակետի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն,* ***չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու,*** *բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը.*

Կանոնագրքի 3.5.3-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, **չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու,** բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:

Վերոգրյալից հետևում է, որ Օրենքով և Կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են մի շարք պարտականություններ, որոնց շարքում ի թիվս այլնի առանձնակի նշանակություն ունի առանց իր վստահորդի հետ համաձայնեցնելու դիրքորոշում չընդունելու՝ փաստաբանի պարտականությունը, եթե առկա չեն հակառակը թույլատրելի դարձնող հիմքեր:

Սույն գործի փաստերից հետևում է, որ թիվ ԼԴ/0060/01/21 քրեական գործով Փաստաբանը 2025 թվականի ապրիլի 17-ին Դատարանում հանդես է եկել ճառով, ներկայացրել է դիրքորոշում մեղադրանքի հետ կապված և նշել, որ Դատարանը պետք է Դիմողին ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով առաջադրված մեղադրանքում ճանաչի անպարտ և արդարացնի, նշել է նաև այն, որ **եթե, այնուամենայնիվ, դատարանը գտնի, որ Դիմողի արարքում առկա է որևէ հանցակազմ, ապա նրա արարքը**

վերաորակի ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով Դիմողին ազատի պատասխանատվությունից:

Դիմողը պնդել է, որ Փաստաբանն իր այս դիրքորոշումը Դիմողի հետ չի համաձայնեցրել, իսկ ինքը Փաստաբանի այդ դիրքորոշումը չի ընդունում:

Նման պայմաններում հաշվի առնելով նաև այն, որ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդման դադարեցումը կրում է ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացիոն) բնույթ՝ Փաստաբանը, գիտակցելով իր վստահորդի համար առաջացող իրավական հետևանքների բնույթը, պարտավոր էր մինչև նման դիրքորոշում ներկայացնելը համաձայնեցնել այն Դիմողի հետ, հակառակ դեպքում ձեռնպահ մնալ այդպիսի դիրքորոշում արտահայտելուց: Մինչդեռ, Փաստաբանը, առանց տվյալ դիրքորոշումը Դիմողի հետ համաձայնեցնելու, արտահայտել է այն դատարանում, ինչը Հանձնաժողովը գնահատում է որպես Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.3 ենթակետի պահանջների, մասնավորապես՝ առանց վստահորդի հետ համաձայնեցման՝ դիրքորոշում չընդունելու պահանջի խախտում, որի համար, ընդ որում, դիրքորոշումը վստահորդի շահերին հակասելու պայմանի առկայություն չի պահանջվում ինչպես Օրենքով, այնպես էլ՝ Կանոնագրքով:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ եթե նույնիսկ դատարանը հիմք չընդունի Փաստաբանի հայտարարությունը, միևնույնն է՝ Փաստաբանը չէր կարող նման դիրքորոշում ներկայացնել, առանց իր վստահորդի հետ նախապես համաձայնեցնելու, իսկ կարգապահական խախտման առկայությունը սույն դեպքում պայմանավորված չէ դրա՝ փաստացի հետևանք առաջացնելու հանգամանքով: Հետևանքի առաջացումը, առավելագույնը, կարող է քննարկվել՝ որպես ծանրացնող հանգամանք:

Ողջ վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ նախորդիվ նկարագրվածն ինչպես առանձին վերցված, այնպես էլ համակցությամբ պարունակում է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.3 ենթակետի խախտում՝ Փաստաբանի կողմից, ընդ որում՝ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ առկա չեն, որպիսի պարագայում Փաստաբանն այս արարքի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

8. Կարգապահական տույժի ընտրությունը.

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.3 ենթակետի՝ սույն որոշմամբ նկարագրված խախտման համար պետք է կիրառել հիմնական կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել»՝ դեոնթոլոգիայի թեմայով, իր հաշվին, 4 ակադեմիական ժամ տևողությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Հանձնաժողովի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելով և լուծելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել՝ խախտում թույլ տված փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է կարգապահական վարույթի քննության յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ, եթե առկա է խախտում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին

հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Փաստաբանին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով, իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից ու համադրությունից, մասնավորապես՝ տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ տվյալ իրավիճակում Փաստաբանը թույլ տված խախտման արդյունքում Դիմողի համար ստեղծել է ոչ արդարացնող հիմքով գործի ելքի հնարավորությանը նպաստելու տպավորություն՝ այն պայմաններում, երբ Դիմողը պայքարել է բացառապես արդարացման համար:

Միևնույն ժամանակ, թեև Փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում, այդուհանդերձ այն իր բնույթով, հաշվի առնելով նաև գործի առանձնահատկությունները, Հանձնաժողովի գնահատմամբ անհամատեղելի չէ Փաստաբանի կարգավիճակի հետ, ուստի այդ խախտմանը հնարավոր է արդյունավետ ներգործել ոչ առանձնահատուկ խիստ կարգապահական տույժի տեսակով՝ նկատողությամբ, միևնույն ժամանակ նաև որպես լրացուցիչ տույժ սահմանելով դեոնթոլոգիայի թեմայով պարտադիր վերապատրաստման դասընթացներին Փաստաբանի կողմից իր հաշվին 4 ակադեմիական ժամ տևողությամբ մասնակցելու պարտականությունը՝ ապահովելու համար հետագայում նման իրավիճակներում Փաստաբանի կողմից վարքագծային-էթիկական պահանջներին համապատասխան գործելու պահանջի կատարումը, հաշվի առնելով նաև, որ թույլ տրված խախտումները վկայում են Փաստաբանի կողմից այդ ոլորտի իրավակարգավորումների իմացությունը բարելավելու անհրաժեշտության մասին, առանց որի Փաստաբանը փաստացի թերացել է վարքագծային-էթիկական պահանջների պատշաճ կատարման հարցում:

Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ ձեռք չեն բերվել, իսկ Փաստաբանն այդպիսի փաստարկ նույնիսկ չի կատարել, ուստի Փաստաբանի մեղքը սույն որոշմամբ արձանագրված կարգապահական խախտման մեջ համարվում է առկա:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով նաև Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով և 7-րդ մասով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Տիգրան Աղասու Մկոյանի (արտոնագիր՝ թիվ 2736) նկատմամբ կիրառել հիմնական կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ

կարգապահական փույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» իր հաշվին՝ դեոնթոլոգիայի թեմայով, 4 ակադեմիական ժամ տևողությամբ՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5 ենթակետի՝ սույն որոշմամբ նկարագրված խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-25070-2-Ա
03 սեպտեմբերի 2025թ.
ք.Երևան